Գործ ԵԴ թիվ 3345/02/23

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույցներ պահանջելու մասին

01 փետրվարի 2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Բաղիրյանս, քննության առնելով ըստ հայցի <<Դաննիկ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ պատասխանող Հայաստանի Հանրապետության ԱՆ քրեակատարողական ծառայության՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<<Դաննիկ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող Հայաստանի Հանրապետության ԱՆ քրեակատարողական ծառայության՝ խնդրելով անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության ԱՆ քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղար Արամ Նիկոյանի 26.12.2022թ. որոշումը՝ <<Դաննիկ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Միաժամանակ <<Դաննիկ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչը միջնորդել է սույն գործը քննել դատական նիստում՝ նկատի ունենալով, որ հայցվորն իր խախտված իրավունքներն ավելի արդյունավետ կերպով կարող է պաշտպանացնի դատական նիստում:

Հայցադիմումը 26.01.2023 թվականին մակագրվել է դատավոր Ա. Բաղիրյանին, դատավորին է հանձնվել 27.01.2023 թվականին:

Սույն հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ կետերի համաձայն՝

1. դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

2. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Դատարանը գտնում է, որ պատասխանողից անհրաժեշտ է պահանջել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար հայտարարված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-23/1» ծածկագրով գնման ընթացակարգի հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Միաժամանակ, դատարանը գտնում է, որ <<Դաննիկ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչի միջնորդությունը ենթակա է բավարարման, և սույն գործն անհրաժեշտ է քննել դատական նիստում:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.6-րդ և 234.9-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. <<Դաննիկ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ Հայաստանի Հանրապետության ԱՆ քրեակատարողական ծառայության՝ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող Հայաստանի Հանրապետության ԱՆ քրեակատարողական ծառայությունից պահանջել Հայաստանի Հանրապետության ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար հայտարարված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-23/1» ծածկագրով գնման ընթացակարգի հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Սույն որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

3. <<Դաննիկ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչի միջնորդությունը բավարարել.

ԵԴ թիվ 3345/02/23 քաղաքացիական գործով դատական նիստ նշանակել 2023 թվականի մարտի 10-ին, ժամը 14:00-ին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիրի նստավայրում /հասցե՝ Հր. Ներսիսյան 10/:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԲԱԴԻՐՅԱՆ**